ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 142-Ա

« 11 » ԱՊՐԻԼԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳՐԱՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 18-րդ և 19-րդ կետերի, 17-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 17-րդ, 18-րդ ենթակետերը, Գ. Հովհաննիսյանի հետ 2019 թվականի օգոստոսի 28-ին կնքված թիվ 421 աշխատանքային պայմանագրի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի «դ» պարբերությունը, 8-րդ կետը, մարզպետի խորհրդական Վ. Աբրահամյանի 05.04.2024թ. զեկուցագիրը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի ապրիլի 10-ի թիվ 01/15/2501-2024 գրության հիման վրա Գ. Հովհաննիսյանի կողմից 2024 թվականի ապրիլի 11-ին ներկայացված գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու՝ կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը չապահովելու, պետական կազմակերպության գույքը պատշաճ կերպով չպահպանելու

համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գրավիկ Հովհաննիսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գ. Հովհաննիսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր